

Մինչև ցայժմ նոյն Երզման համաձայն ընթացան, եւ արդ Նիկոլ Եպիսկոպոս դարձեալ սկսաւ խոռվել ժողովուրդը բանի մը համար, այսինքն ան կը ստիպէ ժողովուրդն ու քահանաները, որ բաժակի մէջ ջրախառն գինի ընդունին Պատարագի ընթացքին, այս սովորութիւնը մեր հայ եկեղեցին չունի, մեր հին հայրերէն սկսեալ, այդ ծէսը չունին ոչ այն հայերը, որոնք ենթակայ են երկու բռնապետներու՝ օսմանցիներու եւ պարսիկներու՝ ոչ ալ այն հայերը, որոնք մեզի կը հպատակին Լեհաստանի մէջ: Այս մասին ստույգ եմ՝ թէ նաեւ Սրբութիւնդ չ'ուզեր եւ չի հաճիր որ այդպիսի պատճառի մը համար տրտունջ եւ խռովութիւն ըլլան, մեր եկեղեցւոյն մէջ, այդ ծէսը չէ գործադրուած մինչև ցայժմ: Եւ արդ, ով Հայր համայն հոգիներու, երբ լսեցինք մեր ժողովուրդին բաղձանքը, մենք որ այս օրերուս Կ. Պոլիս կը գտնուինք, ժողով գումարեցինք մեր եկեղեցականներուն հետ, եւ ուրիշ միջոց չի գտանք, եթէ ոչ մեր աղաչանքներն ու աղաղակը հասցնել Գերերջանիկ Փոխանորդին Յիսուսի Քրիստոսի եւ իշխաններու Պետին, այս նպատակաւ ահա ընտրեցի խորհրդականներէս մին, տեսքով ծերունի, երիտասարդութենէ վարժուած մեր Պատրիարքարանին մէջ, Տէր Յովհաննէս Վարդապետը եւ Միջագետքի Արքեպիսկոպոսը, համբուրելու համար ոտիցդ ներբանը, պատուելու՝ կենդանի մասունքները գլխաւոր առաքելոց, եւ յայտնելու մեր այս տարակոյսը: Այս դիտումով կ'աղաչեմ Երանութեանդ, չլքես մեր որդին եւ քու նուաստ ծառագ, այլ կատարես մեր խնդրանքները, այսինքն՝ գրես անոնց (Լեհահայոց) Եպիսկոպոսին, որ մեր եկեղեցին պահէ մեր հին աւանդութեան եւ ծէսին մէջ, ինչպէս մինչև ցայժմ մնաց, եւ այս՝ շատ դիւրին է Երանութեանդ, եւ ոչ մէկ վնաս կը բերէ Եկեղեցւոյ: Ահա թէ ինչու համարձակեցայ դիմելու գթութեանդ եւ մեր վերոգրեալ աղերսագիրը յղելու: Սակայն Վեհութիւնդ թող ընէ ինչ կերպով որ կ'ուզէ, ինչպէս կը վայելէ բարձրագոյն դիրքիդ եւ գերագոյն մեծանձնութեանդ: Նաեւ այս՝ ծածուկ

չմնայ Վեհութենէդ, Սրբազան Հայր, թէ յիշած ես մեր խոնարհութիւնը եւ յղած ես մեր անարժանութեան յոյժ գեղեցիկ եւ վայելուչ սկիհ մը, որ մեզի հասաւ, եւ մենք զայն ընդունելով շատ ուրախացանք առաւել քան զկար մեր, թող Սրբութենէդ անկորնչելի յիշատակ մ'ըլլայ այս՝ մեր Աթոռին մէջ. մենք մեծադոյն շնորհք մը կը նկատենք զայս Վեհութենէդ տրուած: Այս պատճառաւ մեծ խանդաղատանքով մեր աղօթքը կ'առաքենք ի յոյս ամենեցուն, որպէսզի Աստուած պահէ Քեզ, Գլուխդ Եկեղեցւոյ, երկար ժամանակ, ըստ իր կամքին, եւ ի սէր քրիստոնեայ ժողովուրդներու, Ամէն:»

«Այս ցանկալի նամակը գրուեցաւ 1116 (1667) թուին, ըստ հայկական տոմարին, իսկ ի Ծննդենէ Տեառն 1666ին, Հոկտեմբեր ամսոյն 12ին, ծառաներու ծառայէն Տեառն Յիսուսի Քրիստոսի:»

«Յակոբ Կաթողիկոս Ամենայն Հայոց:»<sup>(1)</sup>

Նոյն իսկ եթէ եղած թարգմանութեամբ իսկ ընդունինք այս նամակը, մենք հոն պարզապէս պատշաճ քաղաքավարական արտայայտութիւններ կը գտնենք, փոխանակ հաւատոյ դաւանանքի եւ ենթակայութեան, զոր իբր թէ տեսնողներ կան: Նամակը որոշ կերպով բողոքագիր մըն է Նիկոլի ձեռքով այն դաւանական ձեռնմխումներուն որոնք կը կատարուէին Լեհաստանի էջմիածնական հայադաւոթին մէջ: Բնական է նոյն իսկ էջմիածնայ եւ իր Կաթողիկոսներուն չէ կարելի վերագրել այնքան միամտութիւն որ անոնք լաւ չի գիտնային թէ Լեհահայոց բռնի հաւատափոխութիւնը կը կատարուէր նոյն իսկ Հռովմի համաձայնութեամբ եւ ծրագրով, եթէ ոչ ստիպմամբ: Հռովմի գերագոյն հեղինակութիւնը ամենադոր էր Եւրոպայի Հռովմէադաւան իշխանութեանց մէջ, իսկ Գերագոյն Հեղինակութեան գլուխն էր Պապը ինքն իսկ, այն ատեն Աղէքսանդր է., որ վախճանած էր Յակոբ Զուղայեցիի նամակին հոն, Հռովմ,

(1) Յակոբ Գ. Զուղայեցի: Գրեց Մեսրոպ Վ. Թերզեան: Պէյրութ, 1956, էջ 146-149: